



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
«ԲԱՐՁՐԱՎԱԼՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐ



«12» 05 2017թ

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՇԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 46

Ձեռնարկողը՝

«Հարձրավոլու Էլեկտրացանցեր» ՓԲԸ  
Ք. Երևան, Զոր. Անդրանիկի 1

Գործունեությունը՝

«Հանգեղութ կենսոլորտային համայիր» ՊՈԱԿ-ի  
«Արևիք» ԱՊ Բողաքար գետի ափին հարող 4.26հա  
տարածքի անփառապարման նախագծի շրջակա միջավայրի  
վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի  
տնօրեն՝



Վ. Սահակյան

**ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՉԱՔՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՉԱՔՆԱՌՅԱՆ**

թիվ ԲՓ 46

<12> 05 2017թ.

**<<Զանգեզուր կենսոլորտային համալիր>> ՊՈԱԿ-ի <<Արևիք>> ԱՊ  
Բողաքար գետի ափին հարող 4.26 հա տարածքի անդառապատման  
նախագծի նախնական գնահատման հայտ**

Ձեռնարկող՝

<<Բարձրավորլտ էլեկտրացանցեր>> ՓԲԸ

Փաստաթղթի տեսակը՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
գնահատման հայտ /Գ կատեգորիա/

Տեղադրման վայրը՝

<<Սյունիքի մարզ, Մեղրի համայնք

Նախագիծը մշակվել է «Բարձրավորլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ և «Կանաչ Դիզայն» ՍՊԸ  
միջև կնքված՝ ՆԲԷՑ-ՊԸԾԶԲ-16/34 պայմանագրի համաձայն: Նախագծի իրականացման  
նպատակն է՝ «Իրան-Հայաստան 400կՎ 3-րդ էլեկտրահաղորդման գիծ» ծրագրի  
իրականացման շրջանակներում անտառային ծածկույթի հատմամբ անտառային  
տնտեսությանը հասցվող վնասի հատուցման նպատակով «Զանգեզուր կենսոլորտային  
համալիր» ՊՈԱԿ-ի «Արևիք» ազգային պարկի տարածքում անտառապատման  
աշխատանքների իրականացումը:

Անտառապատման համար ընտրված ընդհանուր տարածքը կազմում է 6,1 հա հա, որից  
անտառապատման ենթակա տարածքը կազմում է 4,26 հա: Տարածքը տիպիկ լեռնային է,  
լանդշաֆտների և բուսական աշխարհի բազմազանությունը պայմանավորված է յուրահատուկ  
բնակիչմայական պայմաններով: Գործունեության ենթակա տարածքն իրենից ներկայացնում է  
նոսրութ, որը գտնվում է ծովի մակերևույթից 1800մ միջին բարձրության վրա: Լանջի միջին  
թեքությունը կազմում է 20°, կողմնադրությունը՝ հարավ-արևելյան: Տարածքում իմնականում  
գերակշռում է մարգագետնատափաստանային և տափաստանային բուսականությունը:  
Թփատեսակներից տարածված են հոնին, սղնին, տխնին, մասրենին և այլն: Վայրի  
պտղատուներից ոչ մեծ տարածվածությամբ հանդիպում են խնձորենին, տանձենին, շլորենին,  
ընկուզենին և այլն: Անտառկազմող գլխավոր ծառատեսակներն են կաղնին և գիհին, իսկ ոչ  
մեծ տարածվածությամբ բոխին, սոճին, հունական ընկուզենին, անտառային խնձորենին և  
այլն:

Նախագծված տարածքի անտառապատման աշխատանքների իրականացման համար  
որպես գլխավոր ծառատեսակ նախատեսվում է օգտագործել խոշորագույն կաղնու, որպես  
ուղեկցող՝ սովորական հացենու, բարձրլեռնային թխու վայրի տանձենու, խնձորենու հակ  
արմատային համակարգով աճեցված սերմնաբուսակներ: Քանի որ տարածքն իրենից  
ներկայացնում է նոսրութ, տնկումը նախատեսվում է կատարել խաղը սխեմայով՝ 1 հա-ի  
հաշվով օգտագործելով 3000 հատ սերմնաբուսակներ, որից 1500 հատ կաղնի 750 հատ

հացենի և թխկի, 750 հատ տանձենի և խնձորենի: Ընդհանուր անտառապաման համար կպահանջվի 12780 հատ տնկանյութ, որից 6390 հատ կաղնի, 3195 հատ հացենի և թխկի, 3195 հատ տանձենի և խնձորենի: Հողի նախապատրաստումը նախատեսվում է իրականացնել փոսերով՝ ծեռքով: Հիմնադրվող անտառմշակույթների պահպանության նպատակով նախատեսվում է կառուցել 800 գծ երկարությամբ ցանկապատ: Ցանկապատը նախատեսված է կառուցել անտառապատման ենթակա տարածքի միայն այն հատվածով, որը հարակից է ճանապարհին: Մնացած տարածքը չի ցանկապատվելու, որպեսզի չխոչընդոտվի վայրի կենդանիների ազատ տեղաշարժը:

Անտառապատման աշխատանքների իրականացման պարտադիր պայմաններ են հանդիսանում

○ անտառտնկման աշխատանքների ժամանակ փակ արմատային համակարգով բարձրորակ տնկանյութի օգտագործումը

○ 60 %-ից ոչ պակաս տնկարկների կայողականության ապահովումը:

Հիմնադրման տարում նախատեսվում է իրականացնել ագրոտեխնիկական խնամքի աշխատանքներ՝ 4 անգամ, խոտհուն՝ 1 անգամ: Եթե անտառմշակույթների հիմնադրումը իրականացվի աշխատանքները, ապա 4 ագրոտեխնիկական խնամքի և 1 խոտհունի աշխատանքները նախատեսվում է իրականացնել հաջորդ տարի:

Անտառմշակույթների հիմնադրման երկրորդ տարում նախատեսվում է իրականացնել 3 անգամ ագրոտեխնիկական խնամքի և 1 անգամ խոտհունի աշխատանքներ: Երրորդ տարում նախատեսվում է իրականացնել՝ 2 անգամ ագրոտեխնիկական խնամքի և 1 անգամ խոտհունի աշխատանքներ: Չորրորդ տարում նախատեսվում է իրականացնել՝ 1 անգամ ագրոտեխնիկական խնամքի և 1 անգամ խոտհունի աշխատանքներ: Հինգերորդ, վեցերորդ և յոթերորդ տարիներին նախատեսվում է իրականացնել խոտհունի աշխատանքները 1 անգամ: Բոլոր աշխատանքների ծավալը և վարձատրության չափը հաշվարկված է տեխնոլոգիական քարտով:

Հիմնադրման հաջորդ տարում նախատեսվում է իրականացնել անտառմշակույթների լրացման աշխատանքներ, որի համար կպահանջվի 3195 հատ տնկանյութ, որից 1597 հատ կաղնի, 800 հատ հացենի և թխկի, 798 հատ տանձենի և խնձորենի:

Նախագծով նախատեսված է կատարել նաև դաշտամկների դեմ պայքարի աշխատանքներ: Այդ նպատակի համար 1 հա-ի հաշվով նախատեսվում է օգատգործել 200գ ցինկի ֆոսֆիդ, որը պետք է խառնվի 4 կգ գրավչանյութի (ցորեն) և 0.2լ ծերի հետ:

Անտառմշակույթների հիմնադրումից հետո հաջորդ տարիների ընթացքում, անհրաժեշտության դեպքում, անտառային վնասատուների և հիվանդությունների դեմ կարող է իրականացվել նաև քիմիական պայքարի միջոցառումներ (թունաքիմիկատների օգտագործում):

Անտառմշակույթների բարձր կայողականություն ապահովելու համար, նախատեսված է տնկման հետ զուգահեռ իրականացնել անտառմշակույթների ջրում, որի համար անհրաժեշտ ջուրը նախատեսվում է բերել ջրատար մեքենայով: Անտառմշակույթների ջրումը պայմանագրային հիմունքներով իրականացվելու է ռետինե խողովակով՝ ծեռքով: 1 համակերեսում պահանջվելիք ջրի ծախսը 3000 ծառերի համար կկազմի մոտ 30,0 մ<sup>3</sup> ջուր (10լ ջուր յուրաքանչյուր ծառին): Քանի որ տարածքի մոտակայքով անցնում է ոռոգման ջրի խողովակաշար, ապա հետագայում, անհրաժեշտության դեպքում, հնարավոր կլինի ոռոգման իրականացնել ռետինե խողովակի միջոցով՝ համապատասխան ջրային կառույցի հետ համաձանեցված:

Նախագծային փաստաթղթերի վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Մեղրի համայնքում անցկացվել են հանրային քննարկումներ, որի ընթացքում մասնակիցների

և տեղական ինքնակառավարման նարմինների կողմից գործունեության իրականացումն արժանացավ հավանության: Համայնքի ղեկավարի կողմից նշվեց, որ աշխատութի ներգրավվման միջոցով շաբաթօրյակների ծևով համայնքը ևս կմասնակցի այդ տարածքի մաքրման, չոր ճյուղերի հավաքման և տարածքից տեղափոխման, ինչպես նաև ծառատնկման աշխատանքներին: Նախագծային փաստաթղթերի վերաբերյալ ստացվել են կարծիքներ նաև <<ԲՆ համապատասխան տորաբաժանումից: Ստացված կարծիքներով և փորձաքննության արդյունքում առաջացած դիտողություններով նախագիծը լրամշակվել է:

Ամփոփելով, կարելի է եզրահանգել, որ նախագծի իրականացման արդյունքում ընդլայնվող անտառածածկ տարածքները շրջակա միջավայրի վրա կունենա դրական ազդեցություն՝ ինչպես բնապահպանական, այնպես էլ սանհիտարահիգիենիկ տեսանկյունից: Հիմնադրվող անտառմշակույթները կկարգավորեն ջրային ռեժիմը, կբարելավեն միկրոկլիման: Ստեղծվող տնկարկները կնպաստեն էկոլոգիական հաշվեկշոփ կարգավորմանը, առողջարարական և ռեկրեացիոն հնարավորությունների բարձրացմանը

### Փորձաքննական պահանջ

Նախագծի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է տնկմանը զուգահեռ ապահովել անտառմշակույթների ջրումը, իսկ հիմնադրմանը հաջորդող տարիներին՝ որպես կարևորագույն միջոցառումներ՝ ագրոտեխնիկական խնամքի և սանհիտարական հատումների իրականացումը:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Բարձրավոր էլեկտրացանցեր>> ՓԲԸ կողմից ներկայացված <<Զանգեզուր կենսոլորտային համալիր>> ՊՈԱԿ-ի <<Արևիք>> ԱՊ Բողաքար գետի ափին հարող 4.26 հա տարածքի անտառապատման նախագծի նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջի պարտադիր կատարման պայմանով:

Գլխավոր մասնագետ՝

Հեղինակ՝ Հ. Մկրտչյան

